

ՄԱՀՎԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ Գ. ԹՐԱԿԼԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Թրակլի թեման միշտ մահն է: Երբեմն նա այլ ծանապարհներով ու խորհրդանիշներով է մոտենում իր միակ թեմային, բայց դրանք բոլորն ի վերջո գալիս և հանգում են միևնույն կետին: Յ. Նադլերն այդ առումով գրում է. «Հավանաբար դեռ ոչ ոք երբևէ այդքան մեծածավալ ու նրբորեն զարգացող բառապաշարի չի տիրապետել մահվան ու մեռնելու վերաբերյալ»¹: Սակայն մահվան ընկալումը Թրակլի ստեղծագործություններում միանշանակ չէ: Առաջին շրջանում գրված գործերում քնարական հերոսը հիմնականում սարսափում է մոտալուտ մահվանից և կառչած է կյանքին.

Մահ: Մահ: Օ՛ր, ինչ քաղցր է կյանքը²:

Ստեղծագործական միջին շրջանից սկսած Թրակլի մոտ մահվան ընկալման բեկումնային փոփոխություններ են տեղի ունենում, որոնք հասունանում և ամբողջական տեսք են ստանում 1912թ. հետո: Մինչ այդ մահը դեռ միանշանակորեն դրական երևույթ չէ, բայց բանաստեղծություններում հայտնվող վախի մասին տողերը ներկայացնում են ոչ թե բանաստեղծի, այլ սովորական մարդու (որպես մահկանացու) վերաբերմունքը մահվան նկատմամբ, ինչն, ըստ Թրակլի՝ մահվան չգիտակցման հետևանք է.

*Ժամը հինգն է խփում ժամացույցն այս ժամին-
եվ միայնակ մարդկանց մի սարսափ է լսվում,
Իրիկնային այգում ծառերն են սոսափում:
Եվ մեռյալի դեմքն է շարժվում պատուհանին³:*

(«Մարդկային թշվառություն» (853))

* Հոդվածն ընդունվել է տպագրության 21.01.2019:

1 Հղումն՝ ըստ Littek G. S., Existenz als Differenz: der "Dichter" im Werk Georg Trakls, S. 45.

2Tod! Tod! O wie süß ist das Leben! (Don Juans Tod [Eine Tragödie in 3 Akten] Dramenfragment I. Fassung (251/70)).

3 Die Uhr, die vor der Sonne fünfse schlägt - / Einsame Menschen packt ein dunkles Grausen, / Im Abendgarten kahle Baume sausen. / Des Toten Anflitz sich am Fenster regt. (Menschliches Elend ›Menschliche Trauer‹ 2. Fassung (2-2)).

Այս բանաստեղծությունը Թրակլը սկզբում վերնագրում է «Մարդկային տխրություն», սակայն վերամշակելիս փոխում է վերնագիրը՝ վերանվանելով այն «Մարդկային թշվառություն», որպեսզի ընդգծի մարդու անզորությունը մահվան նկատմամբ:

Նրանք խեղճ տիկնիկների նման են մահվան առաջ⁴:

Մահվան ընկալումը Թրակլի պարագայում հանգեցնում է և՛ նրա անբեկանելիության գիտակցմանը, և՛ գործառության կարևորմանը: Իսկ մահվան գիտակցումից առաջանում է սահմանայնության կամ անցողիկության գաղափարը, որն իր հերթին հանգեցնում է օտարության և տուգուսի խնդրին:

Օ. Շպենգլերն իր «Արևմուտքի մայրամուտ» աշխատության մեջ բացատրում է օտարության ու մենակության կապը մահվան գիտակցման հետ, ինչի օգնությամբ էլ կփորձենք վերլուծել օտարության թեման և «օտարականի» պատկերը Թրակլի պոեզիայում: Այսպիսով՝ մտածողը գրում է. «Երեխան հանկարծ ըմբռնում է անկենդան դին [...] ու միաժամանակ ընկալում իրեն որպես առանձնացված գոյ օտար, լայնարձակ աշխարհում: Այստեղ՝ գոյության այս որոշիչ կետում, երբ մարդն առաջին անգամ է դառնում մարդ և իմանում տիեզերքում իր հրեշավոր մենության մասին, համաշխարհային վախը հայտարարում է իր մասին որպես զուտ մարդկային վախ մահվանից»⁵: Այսինքն՝ մահվան ճանաչմանն անմիջապես հաջորդում են մենության և օտարության զգացումները, իսկ մահվան վախը դրանց հետևանքն է: Թեև օտարության և մենակության հիմքերը բանաստեղծի և մտածողի մոտ նույնն են, արդյունքը էապես տարբեր է. Թրակլի պարագայում մահվան գիտակցման հետևանքով առաջանում է ոչ թե վախ, այլ՝ հակում դեպի մահը՝ Կերկեգորից փոխառված «մահվան հանդեպ հիվանդությունը»⁶:

Գ. Զլենֆելդը օտարականին համարում է բանաստեղծի օտարության մարմնավորողը ժամանակակից աշխարհում⁷: Նրան լրացնելու է գալիս Թ. Սպերրիի հետևյալ միտքը՝ «նա իրեն անզոր է զգում իրակա-

4 Sie tun wie arme Puppen vor dem Tod. (Allerseelen (21/6)).

5 Шпенглер О., Закат Западного мира: Очерки морфологии мировой истории, с. 268.

6 Кьеркегор С., Страх и трепет (сборник из трёх произведений), с. 285-404.

7 Kleefeld G., Das Gedicht Als Sühne: Georg Trakls Dichtung und Krankheit: Eine Psychoanalytische Studie, S. 221.

նության հանդեպ, այն խանգարում է նրան, իրեն անվանում է օտարական, մենակյաց, հայրենագուրկ և երբեք չի զգում որպես այսաշխարհայինն պատկանող»⁸: Ուսումնասիրողներից շատերը շեշտը դնում են կյանքի ու իրականության անընդունելիության վրա: Այսինքն՝ բախումը բանաստեղծի ու արտաքին աշխարհի միջև է: Սակայն թրակյան օտարը շատ ավելին է. բախումը ոչ թե բարդ իրականության պատճառով է, այլ՝ հոգու բնույթի հետևանքով:

«Հոգու գարուն» բանաստեղծության մեջ Թրակյը պարզորոշ ասում է՝ «*հոգին օտար է երկրի վրա*»⁹: Հայդեգերն այսպես է մեկնաբանում. «Պատուհնի ուսմունքից ի վեր հոգին պատկանում է գերզգայականին: Սակայն եթե նա հայտնվում է զգայականի մեջ, ապա նա պարզապես քշվել է այնտեղ: Այստեղ՝ «երկրի վրա», նա իր ձիշտ տարերքի մեջ չէ: Նա երկրին չի պատկանում: Հոգին այստեղ մի «օտար» է: Մարմինը հոգու բանտ է, եթե ոչ՝ մի ավելի վատ բան: Այնպես որ հոգուն, ըստ երևույթին, ոչ մի հեռանկար չի մնում, քան զգայականի ոլորտը հնարավորինս շուտ լքելը, որը, պայմանականորեն դիտված, ոչ-ձշմարիտ-գոյավորն է և սոսկ ապականը»¹⁰: Ըստ բանաստեղծի՝ այնաշխարհը միակ ձշմարիտ հանգրվանն է, որին պետք է ձգտել: Երկիրն ու երկրայինը պատկերված են որպես անցողիկ և երկրորդական: Եվ քանի որ անցումն այնաշխարհ կատարվում է մահվան միջոցով, մահը դառնում է միակ ձշմարիտ իրողությունը:

Թրակյի պոեզիայում բազմիցս կրկնվող օտարությունը հայրերի տան նկատմամբ օտարության ամենախոր դրսևորումներից մեկն է, որովհետև եթե դու օտար ես այնտեղ, որտեղ ամենահարազատ անկյունն ու այսաշխարհային քո հանգրվանը պետք է լիներ, ապա դու դառնում ես օտարության ծայրագույն վիճակի մարմնավորում, ինչն ավելի լայն իմաստ է ձեռք բերում՝ խորհրդանշելով օտարությունը երկրայինին առհասարակ.

Ահեղ սենյակներ հին կայք

8 Հղումն՝ ըստ Wolff L., |Hinter dem Hugelistes Winter geworden. § - Perspektiven im Innenraum einer Dichtung. Zum textimmanenten Nachvollzug von Georg Trakls Gedicht (Diss.), Berlin 2008, S. 303.// <http://d-nb.info/990607089/34> - 14.09.2013.

9 Es ist die Seele ein Fremdes auf Erden. (Frühling der Seele (78/23))

10 Heidegger M., Die Sprache im Gedicht (Eine Erörterung von Georg Trakls Gedicht), S. 36-37.

Հայրերի

Սա ցնցում է օտարի կուրծքը¹¹:

«Արևմուտք» բանաստեղծության առաջին տարբերակում՝ վերնագրված «Թափառում», օտարականը կոչվում է «մարդկանց կողմից լքված»¹²: «Դո՛ւն ժուանի մահը» ողբերգության հատվածներից մեկում ևս խոսքը միայն հոգու օտարության մասին չէ: «Օտարածին» բնորոշումն ու մարդկանց համար օտար գազաթններում գտնվելը ցույց է տալիս, որ վերջինիս ընկալում են որպես օտարի: Այսպիսի մտքերը, սակայն, բնորոշ են միայն վաղ շրջանին, ինչին միանում են նաև չսիրված լինելու և մայրական սիրո պակասի մասին բազմաթիվ կարծիքները: Հետագա Թրակլը վերանայում է իր տեսակետը, իսկ օտարն արդեն ոչ թե լքվածության, այլ առանձնաշնորհության դրոշմն է կրում.

*Մթին արարքի միջով, քո էության ձեղքվածքով
Մի օտարածին և տառապանքի համար նախատեսված
Մի հաղթված հաղթանակող, ինքնակորսված
Սառցե գազաթներին, որ օտար են մարդկանց,
Մի որսորդ, որ նետերն է ուղարկում առ Աստված¹³:*

Օտարությունը վերջինիս չի պարտադրվել հասարակության ընկալման կամ մերժման պատճառով, որովհետև նա ոչ թե պարզապես կորուսյալ է, այլ՝ «ինքնակորսված», այսինքն՝ կամովի է կորսվել: Միայն այդպիսի օտարը կարող է որպես «հաղթված հաղթանակող» որակվել, որովհետև ոչ թե ցավով, այլ բարեհաճորեն է ընդունում իր խաչը, ըստ որի՝ ինքը տառապանքի համար է ստեղծված:

Օտար հոգին նաև թափառող է: Ընդ որում՝ այդ թափառումը ոչ թե ուղղակի դեգերում է, այլ՝ փնտրտուք, այսինքն՝ նպատակաուղղված է: Դա է պատճառը, որ օտարականը փնտրում է այդ ապաստանը երկրի վրա, քանի դեռ չի գիտակցել իր օտարությունը երկրին առհասարակ, այսինքն՝ ատոպոսայությունը: Եվ հարցն ամենևին այն չէ, որ նրա համար երկիրը հարմար չէ: Ինչպես փաստում է Հայդեգգերը, այդ

11 Die gestrengen Zimmer und das alte Gerät / Der Vater. / Dieses erschüttert die Brust des Fremdlings. (Amif (63/13-15)).

12 [...] Fremdling. / Der menschenverlassene (Wanderschaft (220/20-25)).

13 Durch finstere Tat, im Zwiespalt deines Wesens - / Ein Fremdgeborener und ein Qualbestimmter Ein überwundner Sieger, Selbstverlorner, / Auf eisigen Gipfeln, die den Menschen fremd, / Ein Jäger, der die Pfeile schickt nach Gott. (Don Juans Tod [Eine Tragödie in drei Akten; Fragment] (245/ 13-17)).

միտքն «անվանում է «հոգի» կոչվածի էությունը»¹⁴։ Ու թեև նման հոգին զգում է դա, շարունակում է փնտրել։ Թերևս դա է նրա ամբողջ առաքելությունը՝ անդադար որոնում, որը չի կարող արդյունք ունենալ, քանզի, ինչպես Ս. Ստեփանյանն է փաստում. «Երկրի վրա արմատ նետելու նկրտումը մի մթին տենչանք է, ոչ բնական և ուրեմն չի ստանա բնական բավարարում»¹⁵։

*Անիրական է թվում ապրողների շուրջպարը,
Եվ հրաշալի ցնդում է երեկոյի բամու մեջ*¹⁶։

Շուրջպարով հեղինակը նկատի ունի հենց կյանքը, որն անիրական է, որովհետև ինչքան էլ մարդիկ՝ ապրողները, պտտվեն կյանքին համընթաց, այդ ամենը հոգս է ցնդելու այնպես, ասես չէր էլ եղել։ Ըստ թրակյան գոյափիլիսոփայության՝ մահվանն է պատկանում վերջին խոսքը և կյանքի առավել իրական բաժինը։ Դրա համար էլ հատումները այս- և այնաշխարհի անընդհատ են։ «Թափառական» է վերնագրված այս բանաստեղծությունը, որտեղ մեռած կերպարանքը հետևում է տղային.

*Հետևում է տղային մի մեռած կերպարանք*¹⁷։

Հետևելու դրվագի բազմակի կրկնությունների ուսումնասիրությամբ կարող ենք փաստել, որ հետևման պատճառն այն է, որ վերջինս չի պատկանում այսաշխարհին։ Նա դեռ այնաշխարհային չէ, բայց և այստեղ ևս չի կարողացել հաստատվել, դրա համար էլ «մի թափառող» է անվանվում։ Այս առումով Հայդեգենն ասում է. «Նրանք՝ «թափառման մեջ» գտնվողները, իրենց արահետների մթության միջով թափառելով, պետք է նախ տուն և սեղան ձեռք բերեն, ո՛չ միայն և ո՛չ այնքան իրենց համար, այլ շատերի. քանզի սրանք կարծում են, որ ընդամենը տներում տեղավորվելով և սեղանի շուրջը նստելով՝ արդեն իրերից իր-այնացվել են և հասել բնակության»¹⁸։ Ստացվում է, որ այդ

14 Heidegger M., Die Sprache im Gedicht (Eine Erörterung von Georg Trakls Gedicht), S. 37.

15 Սերգեյ Ստեփանյան, Քրոջ սիմվոլի երեք մակարդակները. երկիր. երազ. Լեզու. Թրակ. Տերյան. Ցեխան, էջ 263։

16 Unwirklich scheint der Lebendigen Reigen / Und wunderbar zerstreut im Abendwind. (Allerseelen (21/13-14)).

17 Folgt dem Knaben ein erstorbenes Antlitz, (Der Wanderer 2. Fassung (68/6)).

18 Heidegger M., Die Sprache, In: Unterwegs zur Sprache (Gesamtausgabe, Bd.12, I. Abteilung: Veröffentlichte Schriften 1910-1976), Frankfurt am Main: Vittorio Klostermann GmbH 1985, S. 20.

ամենը զուր է, քանի որ օտարին, մենակյացին, թափառողին և նրանց բոլորի հանրագումարը հանդիսացող բանաստեղծին, տրված չէ հաստատվել այսաշխարհում: Վերջիններս այսաշխարհային չեն, դա զգում են բոլոր այնաշխարհայիններն ու անընդհատ կանչում են նրանց.

Դեգերողին փչում է ոսկեգույն սառնությունը

Օտարին. գերեզմանից,

Ասես հետևում է ստվերում մի քնքուշ դի¹⁹:

1913 թ. կեսերին գրված նամակներից մեկում բանաստեղծը ոչ միայն տալիս է մահվան իր ընկալումը, այլև հատկապես ուշ շրջանի ստեղծագործությունների բանալին. «Տենչում եմ այն օրը, երբ հոգին այլևս չի ուզի և չի կարողանա ապրել այս անհոգի, մեղամաղծով վարակված մարմնում, երբ այն կլքի այս աղտ ու նեխումից կազմված ծաղրելի կերպարանքը, որը սոսկ չափազանց իրական արտացոլանքն է մի անաստված, անիծյալ դարի»²⁰: Այսինքն՝ մահը ոչ թե քայքայում է, այլ՝ մարդու քայքայված պատկերը լքելը.

*ժամերգությանը անհետանում է օտարը սև քայքայման
մեջ նոյեմբերի.*

Փտած ծյուղերի տակ, բորով լցված պատերի նորքո

Դեպի որ մինչ այդ սուրբ եղբայրն էր գնացել՝

Սուզված իր խելացնորության լարերի քնքուշ նվագում²¹:

Օտարականը գնում է այնաշխարհ՝ հետևելով սուրբ եղբորը: Թեև մահը բնորոշվում է որպես «նոյեմբերյան սև քայքայում», օտարականը ինքնական է հետևում սուրբ եղբորը: Պատճառն այն է, որ թրակլյան քայքայումը «տարրալուծումն» է, որը քայքայման մեջ դրական է այնքանով, որ դրա շնորհիվ է լուծվում և միանում ընդհանրական էականին՝ այս դեպքում մահվան այնաշխարհին: Մեռնողները կամովի են գնում ի մահ, քանի որ հասկանում են, որ մահը ոչ թե չգոյության վիճակ է, այլ՝ այլագոյություն, ընդ որում՝ ըստ բանաստեղծի առավել քարձր գոյության վիճակ.

19 Dem Schreitenden nachweht goldene Kühle / Dem Fremdling, vom Friedhof, / Als folgte im Schatten ein zarter Leichnam. (Vorhölle (72/ 10-12)).

20 Trakl G., Die Briefe: Brief 85. An Ludwig von Ficker (In Innsbruck), Salzburg, 26.06.1913 (2. Teil, April 1913 - Oktober 1914).

21 Zur Vesper verliert sich der Fremdling in schwarzer Novemberzerstörung, / Unter morschem Geist, an Mauern voll Aussatz hin, / Wo vormem der heilige Bruder gegangen, / Versunken in das sanfte Saitenspiel seines Wahnsinns (Helian (41/34-37)).

Քնքուշ պարուրում է մի նոսր կանաչ օտարի ծունկը

Մի մեղմ Աստված՝ շատ հոգնած ծակատը,

Քայլքը արծաթ վերստին դիպչում է խաղաղությունը²²:

Վերջին տողում կիրառված «zurücktasten» բայը հեղինակային է և բառարանային թարգմանություն չունի: «tasten»-ը նշանակում է «1. դիպչել, շոշափել, 2. խաղափել», իսկ «zurück»-ը նախածանց է, որն ունի «ետ» իմաստը: Այսինքն՝ այդ «կրկին դիպչող» քայլքը ինչ-որ ժամանակ եղել է այնտեղ, հետևաբար՝ սա վերադարձ է: Այս բայն օգնում է հասկանալ Թրակլի «հոգին օտար է երկրի վրա» միտքը, որն իր հերթին օտարականի բանալին է: Այսպիսով՝ անմահ հոգին ժամանակավոր է հայտնվում այստեղ, դա է նրա օտարության պատճառը, այնաշխարհից է գալիս ու պետք է վերադառնա այնտեղ մահվան միջոցով: Դրա համար էլ այնաշխարհը թոռների, չճնվածների հանգրվանն է, որոնք ոչ թե չգոյությունից հայտնվում են կյանքի մեջ, այլ այնաշխարհից են գալիս ու դրա գիտակցման շնորհիվ ընկնում են թափառման և որոնման ծիրի վրա, ինչն էլ հանգեցնում է հավերժ ձգտմանը դեպի այնաշխարհ, որը, փաստորեն, նրանց իրական տոպոսն է:

Օ. Կոկոշկան՝ ժամանակի ականավոր նկարիչներից և Թրակլի մտերիմներից մեկը, մի պիես ունի, որի վերնագիրն արդեն իսկ օգնում է հասկանալ թրակլյան մոտեցումը մահվան նկատմամբ՝ «Մարդասպանը՝ կանանց հույս» (?Mörder, Hoffnung der Frauen?): Ըստ ընդունված տրամաբանության՝ մարդասպանը պետք է սարսափ ու ատելություն ներշնչի, ոչ թե հույս, ինչպես Կոկոշկայի և Թրակլի մոտ: Այսպիսով՝ դրամայի գրեթե բոլոր կտավներում տղամարդը պատկերված է դանակով, իսկ կինը՝ համաձայնության նշանով («Ok»): Համանուն կտավում, երբ պետք է կատարվի սպանությունը, արդեն տղամարդն է համաձայնության կրողը: Փաստորեն՝ կինն ի սկզբանե համաձայն է մեռնել, ու կրկին նույն համաձայնությունն է տղամարդու դաստակին, երբ նա պատրաստ է սպանությանը: Սակայն, ի վերջո, կինն է սպանում տղամարդուն:

²² Weich umschmeichelt ein spärliches Grün das Knie des Fremdlings, / Ein milder Gott die sehr ermüdete Stirn, / Tastet silbern der Schritt in die Stille zurück. (Am Monchsberg (209/9-11)).

Դերային այս փոփոխությունը մահվանից բացի բացատրում է մարդասպանի ընկալումը նկարչի և բանաստեղծի կողմից: Մարդասպանը ոչ թե անխիղճ դահիձ է կամ ոճրագործ, այլ իր առաքելությանը հավատարիմ, համբերատար կերպար: Դա է պատճառը, որ «զոհը» խանդավառությամբ է սպասում սպանության ակտին: Նույն միտքն է արտահայտում Թրակլը «Կապույտ մորուք. Մի տիկնիկային ներկայացում» պիեսում.

*Վերցրո՛ւ ամենը, ամենը, ինչ ես եմ,
Դու, հզո՛ր, իմ կյանքը վերցրո՛ւ դու:
Ինչո՞ւ ես կանգնած հեռու՝²³:*

Կասպար Հաուզերը, որը «չծնված» է անվանված, մեռնում, ձիշտ է ասել՝ չի ծնվում մարդասպանի շնորհիվ, որովհետև հենց այն ժամանակ, երբ նա սկսում է թաթախվել կյանքի մեջ, մարդասպանը հետևում է նրան և կատարում «իր գործառույթը»՝ թույլ չտալով, որ վերջինս դառնա մահկանացու, այսինքն՝ ծնվի բառի թրակլյան նշանակությամբ²⁴.

23 Nimm alles, alles was ich bin - / Du Starker - mein Leben - du nimm hin! / Was stehst du fern – (Blaubart. Ein Puppenspiel (Fragment) 2. Szene (243/122-124;169-171)).

24 Առավել մանրամասն տե՛ս Հովսեփյան Տ., Կասպար Հաուզերի կերպարը 20-րդ դարի գերմանալեզու բանաստեղծների՝ մասնավորապես Գ.Թրակլի պոեզիայում, Աղբյուրը՝ Համատեքստ - 2013, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2013, էջ 220-221:

*Տեսավ, որ ձյուն էր ընկնում մերկ ձյուղերին,
Իսկ տան մթնող շեմին՝ ստվերը մարդասպանի:
Արծաթ ընկավ գլուխը չծնվածի²⁵:*

«Անիֆ» բանաստեղծության հետևյալ տողերը փաստում են, որ «չծնվածությունը» առաջին հերթին անմեղության չափանիշն է.

*Մեծ է մեղքը ծնվածի: Ավա՛ղ, դուք ոսկե հայեցողներ
Մահվան,
Քանզի հոգին սառնագույն ծաղկունքներ է երազում²⁶:*

«Չծնվածության» գաղափարն ավելի խորն է, քան ատուպոսայնությունը, որովհետև չծնվածը ոչ թե տեղ չունի, այլ դրա կարիքը չունի (գոնե երկրի վրա): Նա ուղղակի գալիս, հավում է այսաշխարհին, հաստատվում միայն լեզվի մեջ, բայց չի փորձում իր աշխարհից կտրվել ու այստեղ վերածնվել: Չծնվածը բանաստեղծն է կամ արվեստագետը՝ բանի կամ ձևի կրող, ով ավելի շատ այնաշխարհում է, իր բերած ձևն ու բանն էլ են այնաշխարհային: Նա ընդամենը հյուր է այստեղ, գալիս է, կատարում իր առաքելությունը ու հեռանում: Նա «վերերկրային» է, ոչ թե երկնային, այլ հենց՝ ոչ երկրային իմաստով: Դա է պատճառը, որ Թրակն իրեն համարում է «միայն կիսով չափ ծնված»²⁷: Ծնվելը՝ հետևաբար կյանքը, անմիջապես մեղքի հետ է կապվում, իսկ ահա մահը՝ ճշմարիտի, որովհետև նրա հայեցողները ոսկյա են, իսկ մեռյալները միայն դրական նկարագիր ունեն: Դա բացատրում է պատճառը, թե ինչու է մահը երգվում.

Հոգին երգեց մահը՝ կանաչ քայքայումը մարմնի²⁸:

Ընդ որում՝ երգողը հոգին է, որովհետև դա իր ազատագրումն է՝ թեկուզ և մարմնի քայքայման գնով: Բանաստեղծություններում մահը 1913 թ. հետո ավելի ու ավելի է կարևորվում: Ըստ Թրակի՝ միայն մահվան այնաշխարհում է ապահովվում իրական հանգիստը, հավերժա-

25 Sah, daß Schnee fiel in kahles Gezweig / Und im dämmernden Hausflur den Schatten des Mörders. // Silbern sank des Ungebornen Haupt hin. (Kaspar Hauser Lied (56/20-22)).

26 Groß ist die Schuld des Geborenen. Weh, ihr goldenen Schauer / Des Todes, / Da die Seele kühlere Blüten träumt. (Anif (64/17-19)).

27 Cheie L., Georg Trakls »Ruh und Schweigen«. Kreative Bilddynamik im Modus des Obsessiven. In: Georg Trakl und die literarische Moderne (hrsg. von K. Csufri), Tübingen: Niemeyer 2009, S. 106.

28 Seele sang den Tod, die grüne Verwesung des Fleisches (An einen Frühverstorbenen (65/12)).

կան հանգիստը, դրա համար էլ Էլիզը կոչվում է *«հանգստացող կլոր աչքերով»*²⁹։ Բանաստեղծի ընկալմամբ մահը հանգիստ է պարգևում կյանքի աղմուկից ու ապականությունից հոգնած, լուրջությամբ տենչացող «օտար հոգիներին»։

*Մեռած հանգստանում ենք մենք շամբուկի թփի տակ*³⁰։

Դնայած այսպիսի ընկալմանը՝ պետք է նշել, որ մահվան գաղափարական պաշտամունքը, նրա նախընտրելի լինելը հակափիլիսոփայական դրույթ է, եթե սույն գաղափարի կրողը գոյատևում է տևական ժամանակահատվածում և ինքնավախճանի նպատակով վճռորոշ գործողություն չի կատարում կամ կատարում է ոչ թե կյանքի համեմատաբար լուսավոր կամ չեզոք գոյաձևի պայմաններում, այլ՝ ծանր անկումային վիճակում, երբ շատ ավելի ատելի է կյանքը, քան՝ սիրելի մահը։ Թրակլի ենթադրյալ ինքնասպանության ուշացման պատճառը երևում է նրա նամակներից մեկում. *«Մի այնպիսի անասելի դժբախտություն է, երբ մեկին երկատում է աշխարհը։ Օ՛ր, Աստված իմ, ի՜նչ օրերն է ինձ վրա թափվել։ Ասացեք ինձ, որ պետք է ուժ ունենամ դեռևս ապրելու և ճշմարիտը իրագործելու»*³¹։

Քրոջ ինքնասպանության պայմանները փաստում են նրանց երկուսի վերաբերմունքը մահվան հանդեպ։ Եղբոր մահից երեք տարի անց Գրետե Լանգեն մի ուրախ հավաքույթի ժամանակ անցնում է կողքի սենյակը և քսանհինգ տարեկանում կրակոցով վերջ տալիս իր կյանքին։ Այս արարքով վերջնակետին է հասնում բոլոր վերջին կերպարանափոխությունը, իսկ բանաստեղծություններում նրա շուրթերից հնչող *«սպանիր քեզ»*³² արտահայտությունը ուղիղ իմաստ է ձեռք բերում։

Ֆ. Ֆյումանը գրում է. *«Թրակլի կյանքը այն վարձն էր, որը նա պետք է վճարեր՝ իր գործերն այնպես ստեղծելու համար, ինչպես նա էր ստեղծում»*³³։ Բանաստեղծի համար ապրելու գնով ստեղծագործելը ծանր լծի, բայց և առաքելության նման էր, որը Աստծուց է տրվում և ավարտվում է միայն այն դեպքում, երբ *«բոսոր բոցը հանգչում է քե-*

29 Erscheint du, Elis, ein Ruhender mit runden Augen. (Elis 3. Fassung (50/5)).

30 Erstorbene ruhen wir unterm Hollundergebüsch, (Abendlied (38/7)).

31 Trakl G., Die Briefe: Brief 106. An Ludwig Von Ficker (In Innsbruck), Wien, Ende (?) November 1913 (2. Teil, April 1913 - Oktober 1914).

32 Töte dich! (Offenbarung und Untergang (96/63)).

33 Sauermann E., Fühmanns Trakl-Essay - das Schicksal eines Buches: zur Autorisation der Ausgaben in der DDR und der BRD, Bern: Peter Lang International Academic Publishers 1992, S. 121.

րանում»³⁴: Որպես Աստծուց տրված «օրենք» այն նաև աստվածային հատուցում էր ստանալու:

Եվ մեր տառապանքները արյունաքամող

Դեպի հեռավոր երկինքներ են մեր հոգիները բարձրացնում»³⁵:

Ինքնասպանությունը հակաքրիստոնեական երևույթ է և համարվում է մեծագույն մեղքերից մեկը, եթե ոչ ամենամեծը, սակայն Թրակլի ընկալմամբ այդ միջոցով ևս կարելի է հասնել մահվան այնաշխարհին: Թրակլյան մահվան այնաշխարհը ընդհանուր դրույթներով ոչ միայն չի հակասում կրոնական գաղափարախոսությանը, այլև շատ դրույթներում շարունակում է դրանք:

Ուշ բանաստեղծություններում «հեռավորը», որին ամբողջ ստեղծագործական գործընթացում ձգտում է բանաստեղծը, երկրային ոլորտներից անցում է կատարում երկնքին:

Հեռուն մոտիկ է դառնում: Օ՛, ցնծալի դու:

Արև, ամպեր, ծաղիկներ և մարդիկ

Ծնչում են աստվածային հոգևոր անդորր»³⁶:

Երկրի վրա հանգրվան գտնելու հույսը լիովին կորսված է, իսկ մահվան այնաշխարհը գնալով ավելի ու ավելի է նմանվում դրախտին:

Օ՛, սրինգներ լույսի. Օ՛, սրինգներ մահվան»³⁷:

Մահվան այսպիսի ընկալմամբ է պայմանավորված մեռյալների և հատկապես վաղամեռիկների նկատմամբ այդքան դրական վերաբերմունքը և աստվածային գույների և խորհրդանիշների ներկայությունը նրանց նկարագրերում: Ելիզը, Սեբաստիանը, Հելիանը, ինչպես նաև սուրբ եղբայր Հյուլդեուինն ու սուրբ եկվոր Նովալիսը իրենց աստվածային գույներով գալիս են հաստատելու մահվան այնաշխարհի իրական արժեքն ու մեզ համար անտեսանելի նշանակությունը:

Հայդեգերը գրում է. «Ելիզը դեպի մայրամուտ կանչված օտարականն է: Ելիզը ամենևին կերպար չէ, որով Թրակլը ինքն իրեն նկատի ունի: Ելիզը այնքան էականորեն է տարբերվում բանաստեղծից, ինչ-

34 Մի բոսոր բոց / հանգավ իմ բերանում: [Eine purpurne Flamme / Erlösch an meinem Mund. (Unterwegs II (49/23-24))].

35 Und unsre Leidenschaften im Verbluten, / Zu ferner'n Himmeln unsre Seelen heben. (Einklang (146/12-13)).

36 Fernes wird nah. O Freudiger du! / Sonne, Wolken, Blumen und Menschen / Atmen selige Gottesruh. (Die drei Teiche von Hellbrunn »Die drei Teiche in Hellbrunn«, 1. Fassung, Der Zweite (102/17-19))

37 O die Flöte des Lichts; o die Flöte des Tods. (Verwandlung des Bösen (57/38-39)).

պես Չրադաշտի կերպարը՝ մտածող Նիցշեից»³⁸: Այո, Թրակը, անտարակույս, Էլիզը չէ: Էլիզը մեկն է այն քիչ պատկերներից, որ քնարական Ես-ի կրող չէ, սակայն Էլիզը մի Թրակ է կամ Թրակը ևս մի Էլիզ է: Ձգտումը դառնալ «մի Էլիզ» կամ «մի Սեբաստիան», նույնն է՝ թե ձգտել մահվան այնաշխարհ՝ նախօրոք կատարելով այսաշխարհային իր առաքելությունը: Եթե Նիցշեի պարագայում գերմարդուն հասնելու համար երկար ճանապարհի պետք է հաղթահարվեր և մեծ ջանքեր գործադրվեր, ապա Թրակի համար իր վերջին ու ամենակարևոր կերպարանափոխությունը վրա էր հասնելու մահվան հետ: Այսինքն՝ սա այն կերպարանափոխությունն է, որին բանաստեղծը, Թրակի պատկերացմամբ, ենթարկվելու է անպայմանորեն:

Բանալի բառեր. - Մահ, օտարական, ատոպոսայնություն, թափառում, օտար հոգի, մեռյալ, մեղք, չծնված, այնաշխարհ:

³⁸ Heidegger M., Die Sprache im Gedicht (Eine Erörterung von Georg Trakls Gedicht), S. 50.

Татев Овсепян

Идеологические основы культа смерти в поэзия Г. Тракля

Резюме

Тракль на своем творческом пути постоянно возвращается к теме смерти. Незнакомец, блуждающий, одинокий и бездомный стремится в иной мир по тезису «душа чужая на земле». То есть, именно чужеродность души обуславливает ценность смерти как высшее существование. Миссия мертвых, святых посланцев, ангелов смерти, убийц является отнесение чужеземных в свою истинную обитель. Исследование образов мертвых показывает, что смерть не является для Тракля чем-то негативным, а наоборот, ибо оно не уничтожение или разложение, а освобождение от тюрьмы людской плоти. А освобождение по своей природе неземной души возможно только через смерть. Такое восприятие смерти, несмотря на значительные различия, довольно близко к религиозной концепции.

Ключевые слова: Смерть, незнакомцы, атопосис, странствие, иностранец, мертвый, грех, нерожденный мир

Tatev Hovsepyan

The ideological basis of the cult of death in the poetry of G. Trakl

Summary

Trakl on his creative path constantly reverts to the theme of death. The stranger, the wanderer, the lonely and the homeless are striving for a different world according to the thesis "the soul is a stranger on Earth". That is, the foreignness of the soul determines the value of death as a supreme existence. The mission of the dead, the holy messengers, the angels of death, the murderers is to take the stranger to his true abode. The study of the images of the dead shows that death is not something negative for Trakl, but on the contrary, because it is not destruction or decay, but the liberation of the soul from imprisonment of human flesh. The liberation of the unearthly soul is possible only through death. Such perception of death despite significant differences is quite close to the religious concept.

Keywords: Death, strangers, atoposis, wandering, foreigner, dead, sin, unborn, world.